

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**  
**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ**

**Զ.Գորիս, մարտի 26, 2018թ.**

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, և նպատակ ունենալով խթանել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց, համագործակցության լիարժեք կայացումը, հետագա զարգացումն ու գործընկերային հարաբերությունների ձևավորումը, առաջնահերթ թիրախավորելով աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գործող և սոցիալական ծառայություններ տրամադրող մի խումբ հասարակական կազմակերպություններ, միանալով սոցիալական համագործակցության տարածքային համաձայնագրին (այսուհետ Համաձայնագիր), հայտնում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան, գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ օրենք) ամրագրված դրույթներն իրագործելու համար

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ**

1.1 Համաձայնագրի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում, սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում ապահովել

1.1.1 սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում սոցիալական դեպքի վարման շրջանակներում, փոխգործակցության ապահովում, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացում Համաձայնագրի 2.1 կետում նշված մարմինների և անձանց ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ

1.1.2 ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության մեծացում, սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում, ինչպես նաև կողմնորոշում դեպի սոցիալական աջակցություն ստացողները

1.1.3 սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտում, բացասական ազդեցության չեզոքացում.

1.1.4 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) օրինական շահերի պաշտպանություն և նման իրավիճակում հայտնվելու կանխարգելում.

1.1.5 սոցիալական համախմբվածության ամրապնդում նվազեցնելով խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը

1.1.6 արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում (այսուհետ արտակարգ իրավիճակ) հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծում

1.1.7 աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցում

1.1.8 սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացում

1.1.9 վստահության մթնոլորտի, սոցիալական համերաշխության ձևավորում, և հասարակության մեջ, և աշխատանքում

1.1.10 տարածաշրջանում սոցիալական պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերհանում ու դրանց մասին բարձրաձայնելը

1.1.11 մասնակցային գործընթացի ապահովում մարզում շահագրգիռ կողմերի հետ համակողմանի քննարկումների իրականացում:

## 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

2.1 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գործող և սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունները և Գորիսի, Սիսիանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերն իրավունք ունեն

3.1.1 ստանալ տեղեկություն տեղական սոցիալական աջակցության գործակալության կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին

3.1.2 ակնկալել անհապաղ աջակցություն Կողմերի հնարավորությունների շրջանակում, արտակարգ իրավիճակներում հայտնված անձի (ընտանիքի) խնդիրների լուծման հարցում

3.1.3 առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով և ստանալ դրանց վերաբերյալ գրավոր (այդ թվում էլ եկտրոնային) պատասխաններ Կողմերից.

3.1.4 մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներին.

3.1.5 միանալ սոցիալական համագործակցության ազգային մակարդակում ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրին.

3.1.6 հայտագրվել տարածքային համակարգող Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով

3.1.7 տարբեր, այդ թվում տեղական, սոցիալական ծրագրերի շրջանակներում կազմակերպել հանրային բնույթի միջոցառումներ (քննարկումներ, սեմինարներ, խորհրդակցություններ, բանակցություններ և այլն) և մասնակցել դրանց.

3.1.8 կազմակերպել աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորում, որում կարող են քննարկվել տվյալ տարածաշրջանի սոցիալական բնույթի էական նշանակություն ունեցող խնդիրներ

3.1.9 դադարեցնել մասնակցությունը Համաձայնագրին

3.2 Կողմերը պարտավորվում են՝

3.2.1 պահպանել օրենքով սահմանված համագործակցության սկզբունքները

3.2.2 իրազեկել Կողմերին իր կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին

3.2.3 արագ արձագանքել յուրաքանչյուրն իր հնարավորության շրջանակում արտակարգ իրավիճակներում հայտնված անձի (ընտանիքի) խնդիրների լուծման հարցում համապատասխան Կողմի ահազանգի դեպքում

3.2.4 մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին

- 3.2.5 համագործակցել տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի հետ սոցիալական դեպքի վարման շրջանակներում
- 3.2.6 իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ կյանքի դժվարին իրավիճակում չհայտնվելու, դրա պատճառների բացահայտման և վերացման ուղղությամբ.
- 3.2.7 համագործակցության շրջանակների ընդլայնման և կայացման նպատակով իրականացնել հանրության իրազեկման և տեղեկացվածության բարձրացման աշխատանքներ
- 3.2.8 հավաքագրել և խորհրդին ներկայացնել սոցիալական ծրագրերի իրականացման մասին հանրային կարծիքը և դիրքորոշումն արտահայտող առաջարկություններ
- 3.2.9 մոբիլիզացնել սեփական և հանրային ներուժը ներկայացված առաջարկությունները տեղական սոցիալական ծրագրերում ընդգրկելու համար.
- 3.2.10 համագործակցության ընթացքում ցուցաբերել կառուցողական դիրքորոշում և անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ նպաստելով գործընկերության զարգացմանը.
- 3.2.11 ապահովել հետադարձ կապը Կողմերի, ինչպես նաև հանրության միջև.
- 3.2.12 առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին անհատական սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար
- 3.2.13 պահպանել սույն համաձայնագրի դրույթների կատարումը


## 6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1 Համաձայնագիրը միակողմանի ստորագրվում են ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գործող և սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կողմից
- 6.2 Համաձայնագիրը կազմված է հայերեն մեկ օրինակից, որը պահպանվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության բաժնում
- 6.3 Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է համաձայնագրի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի կողմից վավերացված պատճենի մեկ օրինակ
- 6.4 Համաձայնագրի բովանդակությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում, տեղադրելով նաև համաձայնագրին միացած, ինչպես նաև մասնակցությունը հետ կանչած Կողմերի անունները, անվանումները և այլ տվյալները
- 6.5 Սույն համաձայնագիրը յուրաքանչյուր Կողմի համար ուժի մեջ է մտնում միանալու պահից
- 6.6 Կողմի մասնակցությունը Համաձայնագրին համարվում է դադարած Կողմի մասնակցությունը հետ կանչելու մասին գրությունը (դիմումը) տարածքային մարմին ներկայացնելու պահից

ԿՈՂՄԵՐԻ ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.


1 «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպություն

*[Handwritten signature]*



2 «Գործի ստեղծագործողների միություն» հասարակական կազմակերպություն

*[Handwritten signature]*



3. «Գործի նոր սերունդ» հասարակական կազմակերպություն

4 «Համագործակցության կամար» հասարակական կազմակերպություն



5 «Թթենի» հասարակական կազմակերպություն

*համար 9 հրճարկ պարբեր*



6. «Բարի երթ» հասարակական կազմակերպություն

*[Handwritten signature]*

7. «Գործի մանուկի ակունք» հասարակական կազմակերպություն



8. «Սոսե» հասարակական կազմակերպություն

*[Handwritten signature]*

9. «Գործի կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպություն

10 «Գործի նոր սերունդ» հասարակական կազմակերպություն

